

րինոսի, կը հասկցուի թէ ժամանակ մը Մար-Սարա վանքը սեպհականութիւնը եղած է յունադաւան վրացաց, որոնք ժ. Դ. դարուն վերջերը, զբացիներուն յարձակումներէն ձանձրանալով՝ ծախեցին զայն Սերպերուն, և վերջիններս ալ աւերեալ տեղերը նորոգեցին և կը պահպանէին վանքը, բայց Սերպ տէրութեան անկման հետեանքով չկրցին մշտապէս դիմադրել զբացիներութեանը: Սուլթան Սէլիմի գրաւումէն յետոյ, ինչպէս կը գրեն պատմիչք, 1570ին նոր կուսակալ մը կը հասնի Երուսաղէմ, Մար-Սարայի հագարի չափ կրօնաւորները՝ ընծաներով շընորհաւորութեան կուգան կուսակալին և կը խնդրեն անոր պաշտպանութիւնը. կուսակալը կ'ընդունի ընծաները, բայց այդ բազմաթիւ կրօնաւորներուն՝ Մար-Սարայի բերգանման վանքին մէջ քնակութիւնը տէրութեան շահուց իբր թէ հակառակ գտնելով՝ կը հրամայէ եէնիչէրիներուն որ անոնց միայն երեսունը վերադարձնեն և մնացեալները մահացնեն: Մինչև 1639 Սերպք որոշ իրաւունքներ ունէին Ս. Տեղեաց մէջ, և տակաւին իրենց ձեռք կը մնար Մար-Սարայի վանքը: Նոյն թուականէն քանի մը տարի առաջ անոնք շատ աշխատեցան ի հոգեորս անկախ ըլլալ յոյն պատրիարքարանէն. 1634ին, թէև ձեռք բերին կրօնական անկախութիւն, բայց իրենց վանքերը 54,000 դահեկանի պարտքի տակ ինկած և գրաւի դրուած էին. և Մար-Սարան ալ աւերեալ վիճակ մը ունէր: Սերպերը ճարահատեալ ուղեցին ծախել իրենց գրաւի դրուած վանքերը և պարտքերնին հատուցանել: Քրիստոնեայ ազգերը իմանալով Սերպերուն նպատակը՝ ուղեցին ծախու առնուլ անոնց վանքերը: Յունաց պատրիարքարանը սակայն, ինչպէս որ կը պատմէ Աստուածատուր եպիսկոպոս՝ արաբացի պատմիչէ առնելով, ամէն գնով աշխատեցաւ Սերպերուն վանքերը սեպհականեղ՝ վճարելով պարտուց ամբողջ գումարը պետական անվճար արոց հետ միասին: Այս գումարին հայթայթումը ձեռք բերուած է գլխաւորապէս ի Ռումանիա և յեգիպտոս, եւ ահա այս կերպով յոյն պատրիարքարանը տէր եղած է Մար-Սարայի վանքին (ՏԵՍ Ժանսևնիսագրախիս Պատմութիւն Երուսաղէմի, Հար. Ա. էջ 322-4):